ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

08. 09. 2023թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանու ավագանու ընտրությունների 2023 թվականի սեպտեմբերի 17-ի համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Երևանի ավագանու ընտրությունների 2023թ. սեպտեմբերի 17-ի հերթական ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ առաջին հայտարարագիրը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

Այն բանկերը, որտեղ բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել են տեղեկանքներ նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Համադրելով բանկերից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս ք ու մ է*** , որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝ Տ. ԲԱԲԻԿՅԱՆ